ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

Ն Ա Խ Ա Գ Ա Հ

Հ Ր Ա Մ Ա Ն

«11» Մարտի 2023թ. N 18-Ա

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ, ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐԻՆ ԿԻՑ ՆԵՐԴԻՐՆԵՐԻ ԿԱՍԵՑՄԱՆ ԵՎ ԿԱՍԵՑՄԱՆ ՎԵՐԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Լիցենզավորման մասին» օրենքի 34-րդ հոդվածի 7-րդ մասով, 36-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 8-րդ կետերով, ՀՀ վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 748-Լ որոշման հավելվածի 16-րդ կետի 2-րդ ենթակետով և հիմք ընդունելով ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2023 թվականի մարտի 7-ի N 17–Ա հրամանի Հավելված 3–ի 1-ին, 3-րդ կետերը, ինչպես նաև ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2018 թվականի մարտի 20-ի N 183-Ն հրամանով հաստատված ֆիզիկական անձի անհատական հաշվի քաղվածքի աշխատանքային տեղեկությունները, Հրայր Թունյանի 2023 թվականի փետրվարի 15-ի և Խաչիկ Ավետիսյանի փետրվարի 17-ի դիմումները՝ համապատասխան կազմակերպությունների հետ համագործակցության դադարեցման մասին

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Կասեցնել Հայաստանի Հանրապետության տարածքում քաղաքաշինության բնագավառի համապատասխան գործունեության տեսակով զբաղվելու համար 4 իրավաբանական անձանց թվով 4 ներդիրի գործողությունը, մասնավորապես՝

1) «Ռուֆ գրուպ» (ՀՎՀՀ՝ 00230642) սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրված քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացման տրանսպորտային ոլորտի N 17906-02 ներդիրի գործողությունը 2023 թվականի փետրվարի 20-ից,

2) «Էր-ընդ-Արեգ» (ՀՎՀՀ՝ 09212471) սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրված քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացման տրանսպորտային ոլորտի N 17676-02 ներդիրի գործողությունը 2023 թվականի փետրվարի 20-ից,

3) «Թերմոշինթել» (ՀՎՀՀ՝ 03017274) սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրված քաղաքաշինության բնագավառում քաղաքաշինական փաստաթղթերի ինժեներական բաժինների մշակման տրանսպորտային օբյեկտների նախագծային փաստաթղթերի՝ տրանսպորտային ուղիներ (ավտոմոբիլային ճանապարհներ, երկաթուղային գծեր և օդանավակայաններ) ոլորտի N 17048-04 ներդիրի գործողությունը 2023 թվականի փետրվարի 22-ից,

4) «Ատ-քոմփանի» (ՀՎՀՀ՝ 01034995) սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրված քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացման տրանսպորտային ոլորտի N 18356-02 ներդիրի գործողությունը 2023 թվականի փետրվարի 22-ից:

2. Հայաստանի Հանրապետության տարածքում քաղաքաշինության բնագավառի համապատասխան գործունեության տեսակով զբաղվելու համար 2 իրավաբանական անձանց թվով 1 լիցենզիայի և 2 ներդիրի գործողության կասեցումը համարել վերացած 2023 թվականի մարտի 8-ից, մասնավորապես՝

1) 2021 թվականի դեկտեմբերի 9-ի N 72-Ա հրամանով «Պրիմաշին նախագիծ» (ՀՎՀՀ՝ 00880041) սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրված քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացման բնակելի, հասարակական և արտադրական ոլորտի N 16537 լիցենզիայի և լիցենզիային կից N 16537-01 ներդիրի գործողությունը,

2) 2022 թվականի դեկտեմբերի 27-ի N 80-Ա հրամանով «Շին գրիգ» (ՀՎՀՀ՝ 08424445) սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրված քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացման էներգետիկ ոլորտի N 18017-04 ներդիրի գործողությունը:

3. Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի լիցենզավորման վարչության պետ Նշան Մարտիրոսյանին՝

1) ՀՀ լիցենզիաների միասնական էլեկտրոնային գրանցամատյանում կատարել համապատասխան փոփոխություն:

4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

3/11/2023

X

Signed by: GHULARYAN ARMEN 3509540050

Ա. ՂՈՒԼԱՐՅԱՆ